Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԹՈՐԳՈՄ ՓՈՍՏԱՋՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

Յարգարժան պրն Փօսթաճեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում ազգանուէր Ձեր ծառայութեանը, որ Տիրոջ օրհնութեամբ արդիւնաւորուել է հարուստ վաստակով՝ ի խնդիր Սփիւռքահայ կեանքի զօրացման:

Երկարամեայ գործունէութեան մէջ Դուք առանձնակի տեղ էք հատկացրել երիտասարդ սերնդի հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը՝ գործուն մասնակցութիւն բերելով Միացեալ Նահանգների Լոս Անջելես հայաշատ քաղաքում ազգային ամենօրեայ վարժարանների հիմնադրմանն ու նրանց ազգօգուտ առաքելութեանը: Ստանձնելով պատասխանատու յանձնառութիւններ Լոս Անջելեսի Մեսրոպեան նախակրթարանում եւ երկրորդական վարժարանում, ինչպէս նաեւ ազգային այլ կրթական հաստատութիւններում, Դուք հոգածու նուիրումով սանուց մատաղ հոգիներում խնամել եւ եւս առաւել զօրացրել էք սէրը հանդէպ հոգեւոր եւ ազգային մեր արժէքները, հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին, Հայրենի երկիրն ու հարազատ ժողովուրդը:

Ձեր անունը ծանօթ է մեր ժողովրդի զաւակներին նաեւ Ձեր հեղինակած գրքերով, հայալեզու պարբերականներում տասնեակ տարիներ հրապարակուող գրական եւ հրապարակախօսական յոդուածներով: Ձեր աշխատութիւններում մեծապէս դրսեւորուում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգային նուիրական ժառանգութեան հանդէպ Ձեր նուիրումն ու նախանձախնդրութիւնը, որ ժառանգել էք Հայրենի հողից տարագրուած ծնողներից եւ առաւել զօրացրել Դպրեվանքում ստացած հոգեւոր կրթութեամբ ու դաստիարակութեամբ:

Գնահատանքով ենք անդրադառնում նաեւ Մայր Հայրենիքին մատուցած Ձեր ծառայութիւններին: Տարիներ առաջ Դուք Ձեր աջակցութիւնը բերեցիք Արարատի մարզում դպրոցի վերանորոգմանը, որի բացման եւ ի պատիւ Ձեզ անուանակոչման արարողութեանը մաս-

նակցեցինք նաեւ Մենք՝ ականատես դառնալով մանկավարժների ու աշակերտների խանդավառութեանն ու անկեղծ երախտագիտութեանը Ձեր հանդէպ :

Ի գնահատութիւն տարիների Ձեր վաստակեալ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը մեր մեծ Ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ ապրուածային Իր շնորհն ու օրհնութիւնը անպակաս դարձնի Ձեր յարկից ներս եւ պարգեւի Ձեզ արեւշատ կեանքի երկար օրեր, նոր եռանդ ու ներշնչանքներ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 328